Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 181 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության պետական համակարգի դպրոցներին և նախադպրոցական հաստատություններին դպրոցական և նախադպրոցական զույքի տրամադրում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի Հայ դպրոց հիմնադրամ (Armenia School Foundation – USA,) իրավաբանական հասցեն՝ քաղ. Գլենդել, Սան Ֆերնանդո փողոց 3628, Կալիֆորնիա, ԱՄՆ
4.	Ծրագիրը կատարողը	«Հայ դպրոց» հիմնադրամ (իրավաբանական հասցեն՝ քաղ. Երևան, Բաղրամյան 17, գործունեության հասցեն՝ քաղ. Երևան, Վերին Անտառային փողոց, 127/2 շենք, բն. 6, ՀՎՀՀ՝ 02566785)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում, կրթության բնագավառում
6.	Ծրագրի բյուջեն	Ներկայացվող ծրագրի համար բյուջեն կազմում է 250,000,000 դրամ: Առաջին փուլում՝ 2021 թվականի հունվար – 2022 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածում (հումքի գնում, գույքի արտադրություն, բաշխում), ծրագրի արժեքը կազմում է 99,500,000 դրամ. Ծրագրի երկրորդ փուլում՝ 2023 թվականի հունվար - 2023 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածում (հումքի գնում, գույքի արտադրություն, բաշխում), ծրագրի արժեքը կազմում է 45,000,000 դրամ. Ծրագրի երրորդ փուլում՝ 2024 թվականի հունվար -2025 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածում (հումքի գնում, գույքի արտադրություն, բաշխում), ծրագրի արժեքը կազմում է 75,500,000 դրամ. Ծրագրի ընդհանուր արժեքի 12 տոկոսը՝ 30,000,000 դրամ կտրամադրվի կազմակերպչական ծախսերին:

7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության հանրակրթական համակարգի դպրոցները և նախադպրոցական հաստատությունները: Սույն ծրագրով նախատեսվում է գույքով ապահովել շուրջ 125 դպրոց և մանկապարտեզ: Դպրոցները և նախադպրոցական հաստատությունները կընտրվեն «Հայ դպրոց» հիմնադրամի և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ մշակված ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում՝ ելնելով դպրոցների և նախադպրոցական հաստատությունների կարիքավորության աստիճանից:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թվականի հունվարի 10-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Հայ դպրոց» հիմնադրամի ծրագրի տևողությունը կազմում է հինգ տարի: Հիմնադրամի ֆոնդը ներկայացվող ծրագրի համար կազմում է՝ 250,000,000 դրամ: Ծրագրով նախատեսվում է դպրոցական և նախադպրոցական գույքի պատրաստում հետևյալ քանակներով՝ 5,300 միավոր (1 միավորը՝ 1 դպրոցական սեղան և 2 աթոռ) դպրոցական սեղան-աթոռներ 900 հատ ուսուցչական սեղան 1,000 հատ ուսուցչական աթոռ 800 հատ գրատախտակ 220 հատ դպրոցական գրապահարան 110 միավոր (1 միավորը՝ 1 նախադպրոցական սեղան և 4 աթոռ) նախադպրոցական սեղան-աթոռ 80 հատ (8 տեղանոց) նախադպրոցական պահարան 800 հատ (8 տեղանոց) դպրոցական կախիչ Ծրագրի առաջին փուլում՝ 2021 թվականի հունվարից մինչև 2022 թվականի դեկտեմբերը նախատեսվում է հումքի՝ ԴՍՊ-ի գնում 14,000,000 դրամ, գույքի պատրաստում (կապալառուների հետ պայմանագրեր)՝ 85,500,000 դրամ Ծրագրի երկրորդ փուլում՝ 2023 թվականի հունվարից մինչև 2023 թվականի դեկտեմբերը նախատեսվում է հումքի՝ ԴՍՊ-ի գնում 5,000,000 դրամ, գույքի պատրաստում (կապալառուների հետ պայմանագրեր)՝ 40,000,000 դրամ: Ծրագրի երրորդ փուլում՝ 2024 թվականի հունվարից մինչև 2025 թվականի դեկտեմբերը նախատեսվում է հումքի՝ ԴՍՊ-ի գնում 10,000,000 դրամ, գույքի պատրաստում (կապալառուների հետ պայմանագրեր)՝ 65,500,000 դրամ: Ծրագրի ընդհանուր արժեքից՝ 30,000,000 դրամ կտրամադրվի կազմակերպական ծախսերին:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1 Փայտյա հումքի՝ ԴՍՊ –ի ձեռքբերում՝ 29,000,000 դրամ. 2 Պայմանագրերի կնքում՝ գույք պատրաստող կապալառու ձեռնարկությունների հետ՝ 191,000,000 դրամի չափով, գույքի հետևյալ միավորների համար՝ 2.1 5,300 միավոր (1 միավորը՝ 1 դպրոցական սեղան և 2 աթոռ) դպրոցական սեղան-աթոռ, յուրաքանչյուր միավորի համար՝ 24,000 դրամ, 2.2 900 հատ ուսուցչական սեղան, յուրաքանչյուրի համար՝ 17,000 դրամ, 2.3 1,000 հատ ուսուցչական աթոռ, յուրաքանչյուրի համար՝ 11,020 դրամ, 2.4 800 հատ գրատախտակ յուրաքանչյուրի համար՝ 18,000 դրամ, 2.5 220 հատ դպրոցական գրապահարան, յուրաքանչյուրի համար՝ 48,000 դրամ, 2.6 110 միավոր (1 միավորը՝ 1 սեղան և 4 աթոռ) նախադպրոցական սեղան-աթոռ յուրաքանչյուրի համար՝ 40,000 դրամ, 2.7 80 հատ նախադպրոցական պահարան (8 տեղանոց) յուրաքանչյուրի համար՝ 21,500 դրամ, 2.8 800 հատ դպրոցական կախիչ (8 տեղանոց) յուրաքանչյուրի համար՝ 8,000 դրամ. 3 Գրասենյակի վարձակալության ծախսեր՝ 7,800,000 դրամ. 4 Կապի և հաղորդակցության ծախսեր՝ 2,400,000 դրամ. 5 Գովազդային աշխատանք (ցուցատախտակների պատրաստում, տեղեկատվական բուկլետների տպագրություն)՝ 3,500,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական գումարը նախատեսվում է ծրագրի ընդհանուր արժեքի 12 տոկոսը, որը կազմում է՝ 30,000,000 դրամ: Այս գումարը, ըստ կազմված նախահաշվի, պետք է օգտագործվի հետևյալ ծախսերի համար՝ -աշխատակազմի վարձատրություն (ներառյալ օրենքով սահմանված հարկերի վճարումներ) – 13,200,000 դրամ. -գրասենյակի վարձակալության ծախսեր - 7,800,000 դրամ -ՀՀ մարզեր գործուղման ծախսեր -3,100,000 դրամ -կապի և հաղորդակցության ծախսեր - 2,400,000 դրամ -գովազդային աշխատանք (ցուցատախտակների պատրաստում, տեղեկատվական բուկլետների տպագրություն) - 3,500,000 դրամ:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման շրջանակներում հիմնադրամը համագործակցելու է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների հետ, ինչպես նաև մարզպետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման վերահսկողությունը իրականացվում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից և ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

12.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ